ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-21/12

ք.Երևան «29» Հոկտեմբերի 2021թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար Է.Գևորգյանի, որը գործում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ֆ Տ Դ-ՇԻՆ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ.Հակոբյանի, որը գործում է «Ֆ Տ Դ-ՇԻՆ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Արևմտյան մաքսատուն-վարչության Երևան քաղաքի, Երևան 42 հասցեում գտնվող վարչական շենքի տարածքի վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները իրականացվում՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 240 օրացուցային օրվա ընթացքում:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 2.1 Հավելվածում:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **41 974 218 (Քառասունմեկ միլիոն ինը հարյուր յոթանասունչորս հազար երկու հարյուր տասնութ)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝

դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի հավելված N 3 վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով

հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 17 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 2.1, N 3, N 4, և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7

ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011030534
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝

Է.Գևորգյան

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Ֆ Տ Դ-ՇԻՆ» ՍՊԸ
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Լանջաղբյուր,
Զ.Անդրանիկի-2, նրբ.10
«Ակբա Բանկ» ԲԲԸ

Հ/Հ 220083335475000
ՀՎՀՀ 08423322
«Ֆ Տ Դ-ՇԻՆ» ՍՊԸ-ի տնօրեն՝

Հ.Հակոբյան

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված թիվ 1
«29» Հոկտեմբերի 2020թ. կնքված
ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-21/12 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

Արևմտյան մաքսատուն-վարչության Երևան քաղաքի, Երևան 42 հասցեում գտնվող վարչական շենքի տարածքի վերանորոգման աշխատանքների

CPV-45611300/12

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ. միավորը	Քանակը	Միավորի արժեքը (ՀՀ դրամ)	Ընդամենը (ՀՀ դրամ)
1	2	3	4	5	6
	1-1. Ընդհանուր շինարարական աշխատանքներ				
	Քանդման աշխատանքներ՝ I հարկ				
1	Ապամոնտաժել հակահրդեհային սարքավորումները և տեսախցիկները, պահպանել վերանորոգումից հետո վերատեղադրելու նպատակով	հատ	28.00	1818	50904
2	Ապամոնտաժել «Ամստրոնգ» տիպի կախովի առաստաղները լույսերի և օդափոխության ճաղաշարի հետ միասին	մ²	216.80	455	98644
3	Մաքրել պատերի և սյուների ներկանյութը և պաստառները	մ²	508.60	365	185639
4	Ապամոնտաժել փայտե դռները, շեպերի հետ միասին	մ²	5.20	1820	9464
5	Մուտքի դռան ապամոնտաժում շեպերի քանդումով	մ²	3.39	3200	10848
6	Փայտե ճակատի վիտրաժների ապամոնտաժում շեպերի քանդումով	մ²	62.55	2700	168885
7	Կտրել, կարճացնել սրահի պատուհանները՝ հատակագծում նշված տեղում	մ	1.20	9090	10908
8	Երկրորդ աշխատասրահի արգելապատը ապամոնտաժել 4մ	մ²	12.00	2727	32724
9	Միջնորմային պատերի ապամոնտաժում 100-200մմ հաստության՝ հատակագծում նշված տեղում	մ³	0.80	12400	9920
10	Ապամոնտաժել առկա գիպսակարտոնե միջնորմը 100մմ հաստության՝ հատակագծում նշված տեղում	մ²	9.80	630	6174
11	Պատերի մաքրում ցեմ.ավազային սվաղից՝ սան. հանգույցում և խոհանոցի պատը	մ²	32.00	455	14560
12	Հախճասալի քանդում	մ²	32.00	364	11648
13	Խեցեսալիկների ապամոնտաժում սան. հանգույցում, խոհանոցում և միջանցքում	մ²	15.50	364	5642
14	Ցեմ/ավազային հարթեցնող շերտի քանդում δ=20մմ	մ²	15.50	364	5642
15	Ապամոնտաժել «Ամստրոնգ» տիպի կախովի առաստաղները սան. հանգույցից,բուֆետային մասից և 1-9 միջանցքից	մ²	12.10	450	5445
16	Լինոլեումե և լամինատե հատակի քանդում	մ²	106.60	270	28782
17	Շին.աղբի բարձում	մ³	24.40	1360	33184
18	Տեղափոխում թափոնատեղ 12կմ հեռ.վրա	տ	43.92	1350	59292
	Քանդման աշխատանքներ՝ II հարկ				
1	Գորգածածկույթե,լինոլեումե և լամինատե հատակի քանդում բացի 2-12,2-13 և 2-15 սենյակներից	մ²	335.0	273	91455
2	Ապամոնտաժել «Ամստրոնգ» տիպի կախովի առաստաղները լույսերի և օդափոխության ճաղաշարի հետ միասին	մ²	435.00	455	197925
3	Մաքրել պատերի և սյուների ներկանյութը և պաստառները	մ²	891.10	360	320796

4	Ապամոնտաժել հակահրդեհային սարքավորումները և տեսախցիկները, պահպանել վերանորոգումից հետո վերատեղադրելու նպատակով	հատ	58.00	1818	105444
5	Աշխատասրահի արգելապատը ապամոնտաժել 12,8մ	մ^2	38.40	2730	104832
6	Ապամոնտաժել փայտետաշեղային սալերով դռները, շեպերի հետ միասին՝ հատակագծում նշված տեղում	մ^2	4.20	1810	7602
7	Ապամոնտաժել առկա գիպսակարտոնե միջնորմը 100մմ հաստության՝ հատակագծում նշված տեղում	մ^2	9.50	724	6878
8	Շին.աղբի բարձում	մ^3	46.00	1364	62744
9	Տեղափոխում թափոնատեղ 12կմ հեռ.վրա	տ	82.80	1360	112608
	Վիտրաժներ				
1	Ալյումինե երկշերտ ապակեփաթեթով վիտրաժ, փայլատ 4x12x4մմ, լայնքը 60մմ, արծաթագույն, բացվող մաս	մ^2	8.2100	54500	447445
2	Նույնը՝ չբացվող մաս	մ^2	56.410	50000	2820500
	Դռներ				
1	Մետաղապլաստե, լիցքով, սպիտակ, 60մմ հաստությամբ, 4 խցիկով	մ^2	5.780	40900	236402
	Պատուհաններ				
1	Ալյումինե երկշերտ ապակեփաթեթով 4x12x4մմ, լայնքը 60մմ, ջերմակամրջակով, մոխրագույն, չբացվող մաս	մ^2	49.60	54545	2705432
2	Կտրել ֆասադային վիտրաժների 2700x1100մմ փեղկը 60սմ եզրերից և դարձնել 2100x1100չափերի	հատ	2.00	13636	27272
3	Մետաղական կանգնակների կառուցում քառակուսի խողովակներից 50x50x3,5մմ Պ-1,Պ-6 պատուհանները ձգելու համար	տ	0.3960	454500	179982
4	□ 50x50x3,5մմ խողովակի արժեքը	մ	80.60	3820	307892
5	Մետաղական թերթ 90x60x5մմ 52 հատ	տ	0.0112	910000	10192
6	Մետաղական էլեմենտների յուղաներկում 2 շերտով մոխրագույն երանգի	մ^2	18.00	1818	32724
	Վերակառուցման աշխատանքներ I հարկ				
1	Կեռամոգրանիտե սալերով հատակի իրականացում ամրացված համապատասխան սոսնձով՝ չսահող d=10մմ	մ^2	256.70	9090	2333403
2	Ցեմ/ավազային հարթեցնող շերտի իրականացում 30մմ հաստության, M150 մակնիշի շաղախով	մ^2	256.70	1820	467194
3	Լամինատե հատակների իրականացում h=12մմ (պարալոնի շերտով և շրիշակով)	մ^2	36.90	8180	301842
4	Կախովի առաստաղ «Արմսթրոնգ» տիպի (600*600մմ b=12)	մ^2	219.50	5450	1196275
	Պատի անկյունակի արժեքը	գմ	92.30	320	29536
	Պրոֆիլի Մ արժեքը	գմ	180.00	320	57600
	Կապիչ ձող M6	հատ	146.00	455	66430
5	Կախովի առաստաղի իրականացում խոնավադիմացկուն գիպսաստվարաթղթից δ=12,5մմ մետաղական կարկասի տեղադրումով	մ^2	71.00	4545	322695
	Գիպսաստվարաթղթի մետաղական կարկաս և կարկասի ամրացման հարմարանքներ				
	ա.Գիպսակարտոնի պրոֆիլի CD(մ) արժեքը	գմ	205.90	320	65888
	բ. Գիպսակարտոնի պրոֆիլի UD(մ) արժեքը	գմ	284.00	318	90312
	գ. Ուղիղ կախոց CD-ի համար արժեքը	հատ	99.00	273	27027
	դ. Ինքնապտուտակի արժեքը	հատ	1633.00	9	14697
	ե. Թղթյա ժապավեն կարանների համար արժեքը	մ	85.00	91	7735
6	Գիպսաստվարաթղթի ծեփամածկում և ներկում լավորակ լատեքսային ներկով	մ^2	71.00	1818	129078

7	Պատերի սվաղում գաջի լավորակ շաղախով	մ²	50.00	1818	90900
8	Պատերի սվաղի ծեփամածկում և ներկում լավորակ լատեքսային ներկով	մ²	508.60	1820	925652
9	Կեռամոգրանիտե շրիշակների կառուցում ամրացված սոսնձով h=10սմ L=150,0մ	մ²	15.00	13636	204540
10	Պլաստիկե շրիշակների h=7սմ արժեքը	մ	44.00	455	20020
11	Սանհանգոյցի պատի շարում և բացվածքի փակում 100մմ հաստ. խարամաբլոկներով	մ²	8.00	5000	40000
12	Ցեմ/ավազային լավորակ սվաղ հախճասալիկների տակ՝ սանհանգույցում	մ²	39.50	1818	71811
13	Պատերի երեսապատում հախճասալիկներով , սոսնձի վրա	մ²	39.50	7272	287244
14	Ցեմ/ավազային հարթեցնող շերտի իրականացում 30մմ հաստության, M150 մակնիշի շաղախով	մ²	8.30	1820	15106
15	Հատակների իրականացում չսահող խեցեսալիկներով՝ սանհանգույցում	մ²	8.30	9090	75447
16	Պլաստիկ կախովի առաստաղի իրականացում,մետաղական պրոֆիլի վրա	մ²	8.30	4550	37765
17	Պլաստիկե անկյունակ	մ	20.50	364	7462
18	Փայտե չորսու 30*50 4մ	մ²	0.20	27270	5454
	Վերակառուցման աշխատանքներ II հարկ				
1	Միջնորմային պատի իրականացում երկու կողմից երեսապատված գիպսաստվարաթղթե սալերով d=12,5մմ ,100մմ հաստության, մետաղական հիմնակմաղքի վրա ./հանքային բամբակե ջայնամեկուսիչ շերտ 50մմ/	մ²	16.00	12727	203632
2	Բացվածքի փակում երկու կողմից երեսապատված գիպսաստվարաթղթե սալերով d=12,5մմ ,100մմ հաստության, մետաղական հիմնակմաղքի վրա ./հանքային բամբակե ջայնամեկուսիչ շերտ 50մմ/	մ²	2.31	12700	29337
3	Գիպսակարտոնի ուղղորդ պրոֆիլ UW 50x40	գմ	8.70	180	1566
4	Գիպսակարտոնի հենակի պրոֆիլ CW 50x50	գմ	6.40	230	1472
5	Կախովի առաստաղ «Արմսթրոնգ» տիպի (600*600մմ b=12)	մ²	443.30	5460	2420418
	Պատի անկյունակի արժեքը	գմ	404.00	318	128472
	Պրոֆիլի U արժեքը	գմ	340.00	318	108120
	Կապիչ ձող M6	հատ	304.00	272	82688
6	Առաստաղի, հեծանների սվաղի ծեփամածկում և ներկում լավորակ լատեքսային ներկով 2-3, 2-18 սենքերում	մ²	65.00	1818	118170
7	Պատերի սվաղում գաջի լավորակ շաղախով	մ²	90.00	1818	163620
8	Պատերի սվաղի ծեփամածկում և ներկում լավորակ լատեքսային ներկով	մ²	891.00	1818	1619838
9	Փայտատաշեղային սալերով ապամոնտաժված դռան վերատեղադրում 1100x2100(h)	հատ	1.00	4575	4575
10	Փայտատաշեղային սալերով դռան փականի փոխում	հատ	1.00	10544	10544
11	Կեռամոգրանիտե սալերով հատակի իրականացում ամրացված համապատասխան սոսնձով՝ չսահող d=10մմ	մ²	138.20	9090	1256238
12	Ցեմ/ավազային հարթեցնող շերտի իրականացում 30մմ հաստության, M150 մակնիշի շաղախով	մ²	138.20	1820	251524
13	Լամինատե հատակների իրականացում h=12մմ (պարալոնի շերտով և շրիշակով)	մ²	251.50	8182	2057773
14	Կեռամոգրանիտե շրիշակների կառուցում ամրացված սոսնձով h=10սմ L=150,0մ	մ²	15.00	13636	204540
15	Պլաստիկե շրիշակների h=7սմ արժեքը	մ	44.00	455	20020
16	Վերատեղադրել հակահրդեհային սարքավորումները և տեսախցիկները	կ-տ	86.00	2727	234522
	Դարակաշարեր ԴՇ-1 -7հատ և ԴՇ-2 -6հատ				

1	Թերմոպլաստե պոլիվինիլքլորիդային եզրաշերտ b=18մմ Кромка b=18мм	մ	1085.20	910	987532
2	Երկկողմանի Լամինատ b=18մմ Двусторонний ламинат b=18мм	մ²	232.80	3635	846228
	Սպասասրահի երկկողմանի լամինատե արգելապատ 18 հատ				
1	Թերմոպլաստե պոլիվինիլքլորիդային եզրաշերտ b=18մմ Кромка b=18мм	մ	378.00	909	343602
2	Դարակաշարի մեխանիզմ և բռնակ	կոմպ	162.00	2727	441774
3	Գրանիտե երես 30մմ հաստությամբ	մ²	23.40	31820	744588
4	Գրանիտե շրիշակ 20մմ հաստությամբ, h=120մմ-38,52մ	մ²	7.70	45450	349965
5	Երկկողմանի լամինատներ դարակաշարերի համար	մ²	104.50	7272	759924
6	Թրծած ապակի, 5մմ հաստությամբ	մ²	4.70	27270	128169
7	Ապակու պահունակ	կոմպ	108.00	3636	392688
	Ընդամենը 1-1 մասի				**29329082**
1	Պոլվինիլքլորիդային կոյուղու խողովակ de110, ռետինե սեղմիչ օղակներով, փորձարկումով	մ	6.0	1364	8184
2	Պոլվինիլքլորիդային կոյուղու խողովակ de50, ռետինե սեղմիչ օղակներով, փորձարկումով	մ	10.0	909	9090
3	Ուղղանկյուն խեցե լվացարան, շշաձև սիֆոնով	կոմպլ.	3.0	27273	81819
4	Զուգարանակոնք, թեք թողարկով ցածր տեղակայքով լվացման տակառիկով	կոմպլ.	2.0	39090	78180
5	Հոսակ d=50մմ	հատ	1.0	4545	4545
6	PE խողովակների ձևավոր մասեր de 110	հատ	6.0	909	5454
7	PE խողովակների ձևավոր մասեր de 50	հատ	8.0	727	5816
	Ապամոնտաժման աշխատանքներ				
1	Ուղղանկյուն խեցե լվացարանի ապամոնտաժում	կոմպլ.	1.0	1909	1909
2	Ցածր տեղակայված լվացման տակառիկով զուգարանակոնքի ապամոնտաժում	կոմպլ.	1.0	2727	2727
3	Թուջե խողովակներ d=100-50 ապամոնտաժում	մ	5.0	455	2275
	Ընդամենը 1-2 մասի				199999
1	Պոլիպրոպիլենե խողովակ Φ20x3,4 փորձարկումով,աղտահանումով, լվացումով	մ	12.0	1818	21816
2	Պոլիպրոպիլենային խողովակների ձևավոր մասերի արժեքը d=20մմ	հատ	8.0	455	3640
3	Լվացարանի ծորակ	հատ	3.0	13636	40908
4	Ճկուն խողովակ զուգարանակոնքի լվացման տակառիկի համար Φ15, L=0.5մ	հատ	2.0	3636	7272
5	Փական d=15մմ	հատ	5.0	3637	18185
6	Օդափոխության ճաղաշարի տեղադրում 150x150	հատ	36.0	1818	65448
	Ընդամենը 1-3 մասի				157269
1	Առկա տարբեր տիպի լուսատուների ապամոնտաժում	հատ	190.0	482	91580
2	Առաստաղային լուսատու 35 Վտ, LED, 3600 Լմ, 4000 Կ, 1195x295 մմ ՍԱՆՎ~220 Վ, cosφ=0.92, IP20	հատ	4.0	10910	43640
3	Առաստաղային լուսատու 40 Վտ, LED, 3600 Լմ, 4000 Կ, 1195x295 մմ ՍԱՆՎ~220 Վ, cosφ=0.92, IP20	հատ	15.0	12727	190905
4	Առաստաղի ներկառուցվող լուսատու 40 Վտ, LED, 3100 Լմ, 4000 Կ, 595x595 մմ ՍԱՆՎ~220 Վ, cosφ=0.92	հատ	142.0	9091	1290922

5	Առաստաղի ներկառուցվող լուսատու (կետային) 12Վտ, LED, 960 Լմ, 4000 Կ, 595x595 մմ ՍԱՆՎ~220 Վ, cosφ=0.92	հատ	6.0	9090	54540
6	Երկբևեռ վարդակ, երրորդ հողանցման հպակով, ներքին տեղադրման, ԻԱՆՎ=16Ա	հատ	50.0	1818	90900
7	Միաստեղ միաբևեռ անջատիչ, ներքին տեղադրման	հատ	8.0	1818	14544
8	Երկստեղ միաբևեռ անջատիչ, ներքին տեղադրման	հատ	5.0	1818	9090
9	Տուփ ենթավարդակային/անջատիչային	հատ	63.0	183	11529
10	Հաղորդալար պղնձե, բազմաջիղ, վինիլային մեկուսացումով և վինիլային թաղանթով, կտրվածքը՝ 3x2.5 քմմ ԱՊՎՊ	մ	210.0	909	190890
11	Հաղորդալար պղնձե, բազմաջիղ, վինիլային մեկուսացումով և վինիլային թաղանթով, կտրվածքը՝ 2x1.5 քմմ ԱՊՎՊ	մ	272.0	455	123760
	Ընդամենը 1-4 մասի				**2112300**
	Ընդհանուրը				**31798650**
	Շահույթ 10 %				**3179865**
	Ընդամենը				**34978515**
	ԱԱՀ - 20 %				**6995703**
	Ընդհանուրը				**41974218**

***Կապալառուն աշխատանքները կատարում է ք. Երևան Երևան 42 հասցեում:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7

ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011030534
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝

Է.Գևորգյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Ֆ Տ Դ-ՇԻՆ» ՍՊԸ
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Լանջաղբյուր,
Զ.Անդրանիկի-2, նրբ.10
«Ակբա Բանկ» ԲԲԸ

Հ/Հ 220083335475000
ՀՎՀՀ 08423322
«Ֆ Տ Դ-ՇԻՆ» ՍՊԸ-ի տնօրեն՝

Հ.Հակոբյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 2
«29» Հոկտեմբերի 2021թ. կնքված
ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-21/12 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ԱՐԵՎՄՏՅԱՆ ՄԱՔՍԱՏՈՒՆ-ՎԱՐԶՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ, ԵՐԵՎԱՆ 42 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՏԱՐԱԾՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը **	
		Սկիզբը	Ավարտը
1	Քանդման և ապամոնտաժման աշխատանքներ	Կողմերի միջև կնքվող պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	48 օր
2	Կերամոգրանիտե,լամինատե հատակների կառուցման աշժատանքներ	Կողմերի միջև կնքվող պայմանագիիրը ուժի մեջ մտնելու օրվանից 48 օր հետո	48 օր
3	Բացվածքների փակման և միջնորմների կառուցման աշխատանքներ	Կողմերի միջև կնքվող պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 96 օր հետո	24 օր
4	Երկկողմանի գիպսաստվարաթղթով միջնորմների կառուվման աշխատանքներ	Կողմերի միջև կնքվող պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 120 օր հետո	30 օր
5	Պատերի և առաստաղների սվաղման,ծեփամածկման և ներկման աշխատանքներ	Կողմերի միջև կնքվող պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 150 օր հետո	60 օր
6	Առաստաղների երեսապատում <<Արմստրոնգ>> տիպի կախովի առաստաղներով	Կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 186 օր հետո	54 օր
7	Դռների և վիտրաժների տեղադրման աշխատանքներ	Կողմերի միջև կնքվող պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 198 օր հետո	36 օր
8	Սանհանգույցների պատերի և հատակների սալիկապատման աշխատանքներ	Կողմերի միջև կնքվող պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 186 օր հետո	42 օր
9	Սանտեխնիկական սարքավորումների տեղադրման աշխատանքներ	Կողմերի միջև կնքվող պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 204 օր հետո	24 օր

10	Էլ.մոնտաժային և լուսատուների տեղադրման աշխատանքներ	Կողմերի միջև կնքվող պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 210 օր հետո	30 օր

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7

ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011030534
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝

Է.Գևորգյան

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Ֆ Տ Դ-ՇԻՆ» ՍՊԸ
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Լանջաղբյուր,
Զ.Անդրանիկի-2, նրբ.10
«Ակբա Բանկ» ԲԲԸ

Հ/Հ 220083335475000
ՀՎՀՀ 08423322
«Ֆ Տ Դ-ՇԻՆ» ՍՊԸ-ի տնօրեն՝

Տ.Հակոբյան

(ստորագրություն)
Կ.Տ

«29» Հոկտեմբերի 2021թ. Հավելված թիվ 2.1
կնքված
ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-21/12 ծածկագրով պայմանագրի

Արևմտյան մաքսատուն-վարչության Երևան քաղաքի, Երևան 42 հասցեում գտնվող վարչական շենքի տարածքի վերանորոգման աշխատանքների համար օգտագործվելիք նյութերի նվազագույն երաշխիքային ժամկետները

Կապալի օբյեկտի երաշխիքային ժամկետը՝ 2 տարի

N/N	ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ
1.	Երկբևեռ վարդակ երրորդ հողանցման հպակով, ներքին տեղադրման 16Ա	ՍԱՆՎ~220Վ,ԻԱՆՎ=16Ա MCB	3 Տարի
2.	Երկստեղ միաբևեռ ինքնավար անջատիչ, ներքին տեղադրման, 10Ա	ՍԱՆՎ~220Վ, ԻԱՆՋ=10Ա MCB	3 Տարի
3.	Միաստեղ միաբևեռ ինքնավար անջատիչ, ներքին տեղադրման, 10Ա	ՍԱՆՎ~220Վ,ԻԱՆՋ=10Ա MCB	3 Տարի
4.	Առաստաղային (պատի) լուսատու LED, 40 Վտ հզոր.	40 Վտ, LED, 3100 Լմ, 4000 Կ,1195x 295 մմ ՍԱՆՎ~220 Վ, cosφ=0.92, IP20	3 Տարի
5.	Առաստաղային(ներկառուցված) լուսատու LED, 40 Վտ հզոր.	40 Վտ, LED, 3100 Լմ, 4000 Կ,595x 595 մմ ՍԱՆՎ~220 Վ, cosφ=0.92, IP20	3 Տարի
6.	Առաստաղային լուսատու LED 35Վտ հզորությամբ	LED 35 Վտ, 3600 Լմ, 4000 Կ, 1195x 295 մմ ՍԱՆՎ~220 Վ, cosφ=0.92,IP20	3 Տարի
7.	Առաստաղային ներկառուցվող լուսատու 12 Վտ հզորության LED լամպով	12 Վտ, LED, 960 Լմ, 4000 Կ,(կետային) ՍԱՆՎ~220 Վ, cosφ=0.92, IP20	3 Տարի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7

ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011030534
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝

Է.Գևորգյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Ֆ Տ Դ-ՇԻՆ» ՍՊԸ
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Լանջաղբյուր,
Զ.Անդրանիկի-2, նրբ.10
«Ակբա Բանկ» ԲԲԸ

Հ/Հ 220083335475000
ՀՎՀՀ 08423322
«Ֆ Տ Դ-ՇԻՆ» ՍՊԸ-ի տնօրեն՝

Հ.Հակոբյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 3
«23» Հոկտեմբերի 2021 թ. կնքված
ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-21/12 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

	Ծառայության													
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը*	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2021թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում											
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
1	5113	45611300/12	Արևմտյան մաքսատուն-վարչության Երևան քաղաքի, Երևան 42 հասցեում գտնվող վարչական շենքի տարածքի վերանորոգման աշխատանքներ											41 974 218	41 974 218	**41 974 218**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7

ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011030534
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝

Է.Գևորգյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Ֆ Տ Դ-ՇԻՆ» ՍՊԸ
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Լանջաղբյուր,
Զ.Անդրանիկի-2, նրբ.10
«Ակբա Բանկ» ԲԲԸ

Հ/Հ 220083335475000
ՀՎՀՀ 08423322
«Ֆ Տ Դ-ՇԻՆ» ՍՊԸ-ի տնօրեն՝

Հ.Հակոբյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 4
«29» Հոկտեմբերի 2021 թ. կնքված
ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-21/12 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« 23 » Հոկտեմբերի 2021թ. կնքված
ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-21/12 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն